



ՄԱՔՍԻՄ ԿԱՏՎԱԼԵԱՆ

(1936-2007)

Երեսնի Պետական Համալսարանի (ԵՊՀ) դոցենտ, պատմաբան, վաստակաշատ մանկավարժ Մաքսիմ Արշամի Կատվալեանը ծնունդ է 1936 Նոյեմբերի 1ին Գեղարքունիքի Մարզի Սարուխան գիւղում: 1954ին աւարտելով տեղի միջնակարգ դպրոցը զորակոչուել է բանակ: 1959ին ընդունուել է ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետ, որը աւարտել է 1964ին: Համալսարանն աւարտելուց յետոյ ուսուցչութիւն է արել Նոր Հա-

ճըն աւանի դպրոցում:

1967ին Կատվալեանն աշխատանքի է ընդունուել Հայկական Սովետական Հանրագիտարանում: Նա եռանդուն գործունէութիւն ծաւալեց այնտեղ եւ իր կեանքի վերջին 20 տարիները՝ որպէս հայ ժողովրդի պատմութեան բաժնի գիտական խմբագիր, այնուհետեւ աւագ գիտական խմբագիր, ամենացորդ նուիրեց հանրագիտարանային յօդուածների մշակմանն ու խմբագրմանը: 1981ից նա ղեկավարել է Հանրագիտարանի Հայ ժողովրդի Պատմութեան Խմբագրութիւնը: 1974-1986ին լոյս տեսած Հանրագիտարանի 12 հատորներում հրատարակել է հարիւրաւոր բառ-յօդուածներ: Նշանակալից են յատկապէս «Արարատի Երկիր», «Կիլիկեան Հայաստան», «Վարդանանց Պատերազմ», «Ուրարտու», «Հայաստան (Պատմական Ակնարկ)» բառ-յօդուածները:

Նրա գործուն մասնակցութեամբ են լոյս տեսել նաեւ Հայկական Համառօտ Հանրագիտարանի քառահատորեակը եւ հանրագիտարանային այլ հրատարակութիւններ: 1980ին «Հայկական Լեռնաշխարհի Հնագոյն Պետական Կազմաւորումները եւ Հայկական Տեղախմբերի Համախմբման Ընթացքը Ք.ա. IX-VI դդ.» թեմայով պաշտպանել է քեկնածուական ու ստացել պատմական գիտութիւնների քեկնածուի գիտական աստիճան: 1985ին համատեղութեան կարգով հրաւիրուել է ԵՊՀ Հայոց Պատմութեան Ամբիոն, որտեղ դասաւանդել է մի շարք առարկաներ: 1995ին նրան շնորհուել է դոցենտի աստիճան: 1987ից մինչեւ մահը աշխատել է ԵՊՀ Հայոց Պատմութեան Ամբիոնում:

Կատվալեանը գործուն մասնակցութիւն է ունեցել հայոց պատմութեան բուհական ուսումնական ծրագրերի, ձեռնարկների եւ դասագրքերի ստեղծման աշխատանքներին: Նա հեղինակակից է Հայոց Պատմութիւն. Հիմնահարցեր ուսումնական ձեռնարկի (2000): Կատվալեանի գիտական աշխատութիւնները վերաբերում են հայ ժողովրդի կազմաւորման, հայոց պետականութեան, հին եւ միջնադարեան Հայաստանի պատմութեան բազմաթիւ հիմնահարցերի: Նա առանձնակի ներդրում է ունեցել ինչպէս ուրարտագիտութեան զարգացման, այնպէս էլ Երուանդունի, Արտաշէսեան, Արշակունեաց Հարստութիւնների եւ Կիլիկեան Հայաստանի պատմութեան ուսումնասիրման գործում: Առանձնակի արժէք ունեն նրա «Արեւմտեան Աշխարհակալութեան 13րդ եւ 18րդ Սատրապութիւնները» (1976), «Հին Հայաստանի «Ար-

մենիա» Անուան Ծագման Շուրջ» (1976), «Ուրարտու Աշխարհի Բնօրրանի Տեղորոշման Շուրջ» եւ այլ ուսումնասիրությունները: Ամենագործուն մասնակցություն է ունեցել *Ամենայն Հայոց Կաթողիկոսներ* տեղեկատու պատկերագրքի (2001) ստեղծման աշխատանքներին եւ *Հայոց Եկեղեցու Համրագիտարանի* առաջին հատորի (*Ամենայն Հայոց Կաթողիկոսներ*) գրքի (2008) հրատարակման աշխատանքներին՝ լինելով եւ հեղինակ, եւ խմբագիր:

Մարտիմ Կառվալեանը երկարատեւ ու ծանր հիւանդությունից յետոյ մահացել է 21 Նոյեմբեր 2007ին, Երեւանում:

ՊԵՏՐՈՍ Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



ՄԻՆԱՍ ԳԱՆԳՐՈՒՆԻ

(1929-2009)

Մինաս Գանցիկի Գրքընքեան-Գանգրունին ծնած է Պէյրուք, 6 Յունիս 1929ին, տարսոնցի ծնողքէ: Նախնական ուսումը ստացած է Ազգային Սահակեան եւ Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարաններուն մէջ, իսկ երկրորդականը՝ Վիեննական Միսիթարեան Վարժարանին մէջ: Այնուհետեւ երկու տարի հետեւած է մանկավարժութեան եւ հոգեբանութեան՝ Ecole Superieur de Lettreի մէջ: Հետեւած է մաեւ երգարութեան, նուագի դասընթացքներու եւ հետեւած Լիբանանի Պետական Երաժշտանոցի Երաժշտագիտութեան Բաժնին: 1963ին Լիբանանի Ազգային Երաժշտանոցէն կը ստանայ վկայագիր, թէ՛ «կանոնատրաբար հետեւելով Փրոֆ. Է. Իսայայի դասընթացքներուն՝ երաժշտական յօրինումի մէջ, տուած է քննութիւն հարմոնիի, քոմպոզիտանի, ֆիւլի, օրքեսթրասիոնի, եւ 17 Յունիս 1963ին քննութիւն յանձնած է Պօղոս Ենկալեանի, Պ. Րոպիլլարի, Թ. Սուքքարի ներկայութեան»: Ուստի իրեն շնորհուած է երաժշտական յօրինումի վկայագիր, ստորագրուած Նիքոլա Տալի կողմէ: 1962-1964՝ ուսանած է Լիբանանի Ազգային Երաժշտանոցի Տեսութեան եւ Յօրինումի Բաժնիը: Վկայուելէ ետք, երեք տարի հետեւած է Փարիզի Ecole Superieur et Universelleի երաժշտագիտական եւ յօրինողական արուեստի ճիւղերուն՝ հեռակայ:

1965ին Լիբանանի մէջ *Տօնեւ Միագիքաճի* կազմակերպած յօրինողական մրցանքին շահած է Գ.-Դ. մրցանակ, իր «Ֆուկարօ Փոլիֆոնիք Փուր Օրքեսթրը Սենֆոնիք» յօրինումին համար: Այս յաջողութեան լոյսին տակ կը հրապարակի յօրինելու լիբանանեան օփերէք մը:

1969 Օգոստոս 26էն Սեպտեմբեր 5, Ռումանիոյ Յօրինողներու Միութեան կողմէ կը հրապարակի Ռումանիա մասնակցելու Ռումանիոյ Ֆուլթորի Միջազգային Համագումարին ուր կը ներկայացնէ «Ֆուլթորն ու Երաժշտութիւնը Լիբանանի Մէջ» ֆրանսերէն ուսումնասիրութիւնը: 1970ին (5-23 Սեպտեմբեր) կը հրապարակի մասնակցելու Ժորժ Էնեսքուի նուիրուած Միջազգային Ե. Փառատօնին:

Իրբեւ երգի եւ երաժշտութեան ուսուցիչ պաշտօնավարած է հայ եւ օտար տասնեակ մը վարժարաններու մէջ, ինչպէս՝ Վիեննական Միսիթարեան

(1961-62), ՀԲԸՄ Երուանդ Տեմիրճեան Նախակրթարան եւ Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարաններուն (1969էն վարած է վարժարանին երգչախումբն ու նուագախումբը), Մաքսաւտներու եւ Հարիրի դպրոցական ցանցերուն մէջ:

Երաժշտագիտական եւ քննադատական յօդուածներով աշխատակցած է *Եփրատ*, *Սփիտք*, *Երիտասարդ Հայոցի*, *Արարատ*, *Արարատ Գրական*, *Զարթօնք*, *Շիրակ* թերթերուն: Հեղինակած է խմբերգային յօդուածներ, երաժշտական ստեղծագործութիւններ: Ունի յօդուածներ, ուսումնասիրութիւններ եւ հրապարակային դասախօսութիւններ Ռոմանոս Մելիքեանի, Երուանդ Սահառունիի, Կոմիտասի, հայ երաժշտական քաւորների մասին: Կազմած է խմբագրած է *Գոսասն Երգարանը* (Ա. տպ. Պէյրութ, 1969, Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրտ.): Հրատարակած է *Երաժշտական Բացատրական Բառարանը* (Տպ. Զարթօնք, 1987), որ նմանատիպ հայ քառարաններէն կ'առանձնանայ իր լայնածիր բովանդակութեամբ եւ իւրաքանչիւր եզրի բացատրութեան խորունկ եւ գրեթէ ամբողջական ու բազմակողմանի բացատրութեամբ: Շարք մը եզրերու բացատրութիւնները, ի տարբերութիւն այլ քառարաններու լակոնական ու սահմանափակ տարողութեան հասցումը են երկարաշունչ յօդուածի սահմաններուն: Նման յօդուածները կը միտին գիտահետազօտական մտածողութեան ժամանակակից մակարդակին դնել *Բառարանը*, որ օգտագործուած են բազմալեզու երաժշտական հատորներ ու յօդուածներ: Ունի անաւարտ ամփոփ գործ մը՝ «Նուագարաններու Բառարան»ը:

Գանգրումի վերերան (1968) եւ աւագ վերերան (1997) անդամ էր ՀԲԸՄի:

Միմաս Գանգրումի մահացաւ 13 Հոկտեմբեր 2009ին, Պէյրութ, եւ իր մարմինը ամփոփուեցաւ Պուրճ Համուտի Ազգային Գերեզմանոցը:

ԶԱԲԱՐ ԲԷՇԻՇԵԱՆ եւ ԱՆԳՐԱՆԻԿ ՏԱԳԵՍԵԱՆ

ԳԵՂԱՄ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(1931-2010)

Հայաստանի ճանաչուած գիտնական, անուանի մանկավարժ եւ պատմաբան Գեղամ Եղիշի Կիրակոսեանը ծնուել է 1931ին, Թալինի Աշնակ գիւղում, Սասուն աշխարհից գաղթած ընտանիքում:

1950ին աւարտելով տեղի միջնակարգ դպրոցը, զօրակոչուել ու ծառայել է Խորհրդային բանակում: 1954ին ընդունուել եւ 1959ին աւարտել է Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի Պատմութեան Ֆակուլտետը եւ աշխատանքի անցել ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան Լեզուի Ինստիտուտում:

1971ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1997ին՝ դոկտորական եւ նոյն թուականին ստացել է պրոֆեսորական կոչում:

1971ից մինչեւ իր մահը Կիրակոսեանը աշխատում էր Մանկավարժական Համալսարանում, սկզբում որպէս ընդհանուր պատմութեան դասախօս, դասաւանդելով միջին դարեր, նոր եւ նորագոյն պատմութիւն դասաւանդելը, ապա նաեւ որպէս Բաժնի վարիչ, այնուհետեւ՝ Ամբիոնի պրոֆեսոր:

Նա հեղինակ է մնայուն եւ արժէքատու երեք մենագրութիւնների, 60ից անէի գիտական յօդուածների: Արժէքատու է մանաւանդ նրա *Հայաստանը Լանկ-Թամուրի եւ Թուրքմէն Յեղերի Արշաւանքների Շրջանում* (1386-

1500pp.) (1997) հատորը: Նա կարետը է համարել հնարաւորինս ամբողջացնել միջնադարում իրենց գոյութիւնը պահպանած իշխանական տների՝ Դուխեանների, Հատան-Ջալալեանների, Օրեյեանների, Պոռշեանների, Ազիզբեկեանների եւ Վաչուտեանների պատմութիւնը:

Կիրակոսեանը կեանքում ունէր մէկ երագանք՝ տեսնել Ամին: Եւ նա տեսաւ Ամին, եւ իր բեղմնատը ու զօրեղ գրչի ուժով վերաիմաստաւորեց Ամին եւ որպէս նրա վերածննդի պատգամ, իր առաջարկութիւնները թողեց յաջորդ սերունդներին: Նա ներկայ եւ գալիք սերունդներին, պատմաբան-ուսումնասիրողներին ժառանգեց նաեւ *Հողի եւ Արեան Կանչով եւ Էրզրոմ Է Կանչում* աշխատութիւնները, որոնք արդիւնք են երկու անգամ որպէս ուխտատու Արեւմտեան Հայաստանում կատարած շրջագայութեան:

Նա իր ազնուութեան, սկզբունքայնութեան, մարդկային վեհ յատկանիշների շնորհիւ վայելում էր Մանկավարժական Համալսարանի ողջ անձնակազմի, ընկերների եւ ուսանողների սէրն ու յարգանքը: Նրան ճանաչում եւ ընդունում էին Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս:

Գեղամ Կիրակոսեանը մահացաւ 9 Յունուար 2010ին:

ԱՒԵՏԻՍ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

ԳԵՈՐԳ ԽՐԼՈՒԲԵԱՆ

(1927-2010)

Բազմահմուտ մտաւորական, փրոֆետը Գեորգ Տիգրանի Խորոբեան ծնած է Հալէպ, 19 Օգոստոս 1927ին: Նախակրթութիւնը ստացած է տեղի Հայ Աւետարանական Էմմանուէլ Կարժարանը, իսկ 1946ին ամբողջացուցած է երկրորդական ուսումը Ալեքիֆօ Քոլէճին մէջ:

1946ին ներգաղթած է Հայաստան: 1951ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) Հայոց Լեզուի, Հոգեբանութեան եւ Տրամաբանութեան Բաժինը: 1960ին պաշտպանած է քեկնածուական՝ «Անանիա Շիրակացու Աշխարհայեացքը» նիւթով: 1976ին պաշտպանած է դոկտորական՝ «Հայ Սոցիալական Իմաստասիրութեան Պատմութիւն» նիւթով: 1998ին պաշտպանած է դոկտորական երկրորդ աւարտաճառ՝ «Վաղ Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ» նիւթով:

1958-62՝ աշխատած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային մէջ: 1962-1979՝ եղած է ԵՊՀ դասախօս: 1968-69՝ վարած է Հայկազեան Գոլէճի Հայագիտական Ամբիոնը, որ կազմակերպած է Սփիւքբահայ Գրականութեան Շաբաթը: 1974ին հիմնած է Պոնոնոս Այրեսի Էլ-Սալվատոր Համալսարանի Հայագիտական Դասընթացքները, 1975ին ղեկավարած է Տիբրոյթի Ուլէն Համալսարանի Սլաւոնագիտական Ամբիոնի Հայագիտական Մասը: 1977-79՝ եղած է ԵՊՀ Փիլիսոփայութեան Պատմութեան Ամբիոնի վարիչ, 1979-1982՝ Կիրովական/Կանաձորի Մանկավարժական Ինստիտուտի ղեկավար, իսկ 1982-88՝ Հայաստանի Պետական Փայնասփիոռի եւ Հեռուստատեսութեան Կոմիտէի նախագահի տեղակալ: 1985-86՝ վարած է Հայ Մշակոյթի Պատմութեան դասընթացքը՝ Լա Վըրնի Ամերիկահայ Միջազգային Գոլէճին մէջ: Երեւանի մէջ հիմնած է կիրառական ընկերաբանութեան դպրոցներ: Դասաւանդած է նաեւ Նորքիճի Համալսարանի եւ Մաշտոց Գոլէճի մէջ:

Վերջին տասնամյակին ան ծառայած է նաեւ անտարանչական գործունեութիւն Մ. Նահանգներու, Քանադայի, Հայաստանի ու Ղարաբաղի մէջ:

Անոր ուսումնասիրութիւնները կ'ընդգրկեն հայագիտութեան զանազան քննադատները՝ պատմութիւն, ազատագրական պայքար, Յեղասպանութիւն, մշակոյթի պատմութիւն, աստուածաբանութիւն, իմաստասիրութիւն, ընկերաբանութիւն, սփիւռքագիտութիւն, եւն.: Ըստ այդմ, դասաւանդած է եւ դասախօսած ընդհանուր պատմութիւն, հայ մշակոյթ, ընկերաբանութիւն, հայ մտքի փիլիսոփայութիւն, փիլիսոփայութիւն, հայ եկեղեցւոյ պատմութիւն:

Ան իր ետին կը թողու 10 ամտիպ ուսումնասիրութիւններ, որոնց շարքին՝ «Վաղ Քրիստոնէութիւնը Հայաստանում», «Քարոզների Ժողովածու», ինչպէս նաեւ Ժամանակակից Սփիւռքի եւ արդի հայ յեղափոխական շարժումներուն նուիրուած ուսումնասիրութիւններ:

1989ին հաստատուած է Լոս Անճելըս, ուրկէ շարունակած է աշխատակցիլ հայ մամուլին՝ *Ազդակին*, *Արարատին*, *Ջարթունին*, *Շիրակին*, *Նոր Օրին*՝ հայ երիտասարդութեան, քաղաքակրթութեան հոլովոյթին, խաղաղութեան, նորանկախ Հայաստանի Հանրապետութեան, Սփիւռքահայ իրավիճակին, Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակին մասին նիւթեր ու խորհրդածութիւններ հրատարակելով: Տուած է նոյն բնոյթի բազում դասախօսութիւններ, որոնք կը յատկանշուին առաւել գիտականութեամբ:

Իր յիսնամեայ գիտամանկավարժական եւ հասարակական գործունեութեան առթիւ արժանացած է Ս. Էջմիածնի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ շքանշանին՝ Գարեգին Ա. Կաթողիկոսի ձեռամբ, Մայիս 1999ին: Նոյն առթիւ, Էմերիքըն Եունիվըրսիթիի օֆ Հատալը իրեն շնորհած է Աստուածաբանութեան Պատուոյ Դոկտորայի կոչում: Իրեն շնորհուած է նաեւ Լա Վըրն Համալսարանի Պատուաւոր Դոկտորի կոչում: Գնահատագրեր ու շքանշաններ ստացած է նաեւ Մ. Նահանգներու նախագահ Պիլ Քլինթընէն, ԵՊՀէն, Վենետիկի Միսիթարեան Սիաբանութենէն, Ամերիկայի Հայ Անտարանչական Ընկերակցութենէն:

Հեղինակ է շարք մը գիտական հատորներու, ինչպէս՝ *Անանիա Շիրակացու Աշխարհայեացքը* (1964), *Ժամանակակից Կրօնները* (1965), *Հայ Սոցիալական Իմաստասիրութեան Պատմութիւն - Հելլենիստական եւ Վաղ Յեղոյական Երջան* (1978), *Բուհական Դաստիարակութեան Սոցիոլոգիայի Հարցեր* (1980), *Յեղասպանագիտութիւն* (2006), եւն.:

Փրոֆեսոր Գեորգ Խլոյրեան իր մահկանացուն կնքեց 31 Յունուար 2010ին, Կլենտէյլի մէջ:

ՀՀՀ



ԵԱՐՈՍԼԱՎ ԴԱՇԿԵՒԻՉ
(1926–2010)

Պատմաբան, հայագետ, աղբիւրագետ, Ուկրաինայի ԳԱ Մ. Ս. Գրուշնևսկու անուան Ուկրաինական Հնագրագիտութեան եւ Աղբիւրագիտութեան Ինստիտուտի Լվովի Բաժանմունքի ղեկա-

վար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Եարոսլավ Ռոմանովիչ Դաշկեիչը ծնունդ է Լվովում 1926 Դեկտեմբերի 13ին հին ուկրաինական ազնուական ընտանիքում:

Դաշկեիչը 1944ին աւարտել է Լվովի Ակադեմիական Գիմնազիան, մեկ տարի ուսանել Բժշկական Ինստիտուտում: 1949ին գերազանցությամբ աւարտել է Լվովի Խան Ֆրանկոյի անուան Պետական Համալսարանի Բանասիրական Բաժանմունքի Ուկրաինական Լեզուի եւ Գրականութեան Բաժինը եւ աշխատանքի անցել Ուկրաինայի ԳԱ Գրադարանի Չեռագրերի Բաժնում, բայց շատ չանցած մօր մնան, նրան նոյնպէս ձերբակալել են որպէս քաղաքականապէս անվստահելի եւ ԽՍՀՄ Պետական Անվտանգութեան Կոմիտէի հեռակալ որոշմամբ դատապարտել 10 տարուայ ազատազրկման: Նա կալանքի մէջ է եղել շուրջ 6 տարի: Ազատուելուց յետոյ տաղանդաւոր, ստեղծագործական ուժերով եւ մեծ հնարաւորութիւններով լեցուն Եարոսլավ Դաշկեիչը երկար տարիներ գործազուրկ է եղել եւ գտնուել պետական անվտանգութեան գործակալների մշտական հսկողութեան տակ: Եղել է Ուկրաինայի ԳԱ Ազգագրութեան եւ Գեղարուեստական Արհեստների գիտաշխատող, այնուհետեւ: Բաժնի վարիչ, 1974-1978՝ Ուկրաինայի Կենտրոնական Պետական Պատմական Արխիւի աւագ գիտաշխատող: Նրա կեանքի այդ ծանր ժամանակաշրջանում Հայաստանի ԳԱ Պատմութեան Ինստիտուտը եւ Մաշտոցի Անուան Մատենադարանը յատուկ ուշադրութեան են արժանացրել նրան: Պատմութեան Ինստիտուտը, ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեանի խմբագրութեամբ, 1962ին երեւանում լոյս է ընծայել նրա *Ուկրաինայի Հայկական Գաղութները XV-XIX Դարերի Սկզբնաղբիւրների եւ Գրականութեան Մէջ մեծարժէք մեկնադրութիւնը* (ռուսերէն): Այդ թեմայով նրա բեկնածուական թեզը պաշտպանութեան է դրուել Պատմութեան Ինստիտուտի գիտական խորհրդում: Դաշկեիչի նկատմամբ բացառիկ վերաբերմունք ունէր Մատենադարանի տնօրէն ակադեմիկոս Լեւոն Խաչիկեանը: *Բանքեր Մատենադարանի* էջերում նա մէկը միւսի ետեւից հրատարակել է Դաշկեիչի արժէքաւոր աշխատութիւնները հայ եւ ուկրաինական դարաւոր կապերի մասին: Դրանց բուն էր նաեւ նրա ընդարձակ յօդուածը հայատառ դիպաղերն գրուած մեծաքանակ նիւթերի հեղինակների ազգային պատկանելութեան մասին: Այդ օրերին փորձեր արուեցին դիպաղախօս դարձած լեւահայերին ցոյց տալ որպէս հայերի կողմից քրիստոնեայ դարձուած դիպաղներ (պոլովցիներ) եւ դարերի ընթացքում նրանց ստեղծած գրական ու գիտական վաստակը վերագրել դազախների նախնիներ հռչակուած այդ դիպաղներին: Դաշկեիչը գիտութեան հետ առնչութիւն չունեցող այդ 'տեսութեան' դէմ հանդէս եկաւ մի աշխատութեամբ, որով հիմնաւորապէս հերքեց պատմական իրողութիւնը խեղաթիւրող այդ մտքի վարժանքները:

Կիւեում ԳԱին կից Հնագրագիտութեան Յանձնախմբի գործունէութեան վերականգնումից յետոյ Դաշկեիչը ղեկավարել է նրա Լվովի մասնաճիւղը, իսկ Ուկրաինայի ԳԱ Գրուշեւսկոյ անուան Հնագրագիտութեան եւ Աղբիւրագիտութեան Ուկրաինական Ինստիտուտի ստեղծումից յետոյ՝ Լվովի Ինստիտուտի մասնաճիւղը: 1994ին արժանացել է պատմական գիտութիւնների դոկտորի աստիճանի, 1996ին Լվովի Պետական Համալսարանի ուսուցչապետի աստիճանի: 1998ից ղեկավարել է նոյն Ինստիտուտի Արեւելագիտութեան Բաժինը:

Դաշկեւիչը հեղինակել է ւեպի քան 900 գիտական աշխատութիւն ուկրաինական պատմագրութեան, աղբիւրագիտութեան եւ պատմութեան, արեւելագիտութեան, ուկրաինա-հայկական, ուկրաինա-թուրքական յարաբերութիւնների մասին: 1969ին Կիեւում լոյս է տեսել նրա կազմած *Ուկրաինա-Հայկական Կապերը ԺԷ. Դարում* փաստաթղթերի ժողովածուն (ռուսերէն): Եղել է «Ուկրաինական Հնագիտական Տարեգիրք»ի եւ «Գիտական Աշխատութիւններ - Երիտասարդ Գիտնականների եւ Ասպիրանտների Աշխատութիւնների Ժողովածու»ի փոխսմբագիր, մի քանի գիտական ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ:

1995ին Դաշկեւիչը պաշտօնապէս արդարացուել է 1991ին ընդունուած «Ուկրաինայում Քաղաքական Հալածանքների Զոհերի Արդարացման Մասին» օրէնքի հիման վրայ: Իր աշխատութիւնները հրատարակելու համար գիտնականը հարկադրուած է եղել օգտագործել ւեպի քան 20 ծածկանուններ:

Դաշկեւիչն ի թիւս այլ արժեքատու հայագիտական աշխատութիւնների՝ Նիւ Եորքում եւ Լվովում լոյս է ընծայել *Հայաստանը Եւ Ուկրաինան* երկհատոր գիրքը անգլերէն լեզուով: Նրա վաստակը մեծ է հայ-ուկրաինական գիտական համագործակցութեան ասպարէզում: Նա վայելում էր հայ գիտական հասարակայնութեան բացառիկ յարգանքը: 2001ին նրան շնորհուել Ուկրաինայի Գիտութեան Վաստակաւոր Գործչի կոչում: Նա Լվովի Պատուաւոր Քաղաքացի էր: Մինչ այդ նա պարգեւատրուել էր Ս. Սահակ եւ Ս. Մաշտոց շքանշանով, ընտրուել Հայաստանի ԳԱԱ Պատուաւոր Դոկտոր: Նրան շնորհուել էր նաեւ Երեւանի Պետական Համալսարանի Պատուաւոր Դոկտորի աստիճան: Ընտրուել էր Ուկրաինական Ազատ Ակադեմիայի (ԱՄՆ) Պատույ Անդամ:

Եարոսլաւ Դաշկեւիչը մահացել է 25 Փետրուարի 2010ին, Լվովում:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ,

ԱՐԱՄ ԲԱՆԱԹԱՐԵԱՆ
(1937-2010)

ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, պատմական գիտութիւնների դոկտոր, Հայաստանի հնագիտական ժառանգութեան ուսումնասիրութեան նուիրեալ Արամ Բալանթարեանը ծնուել է 1937ին:

Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետում ուսումնառութիւնից անմիջապէս յետոյ (1959) նա զինուորագրուել է Հայաստանի հնագիտական ժառանգութեան գիտական ուսումնասիրման ու պահպանութեան խնդիրներին՝ դառնալով այդ բնագաւառի ամխոնջ մշակներից ու ճանաչուած գիտականներից մէկը: Միաժամանակ, նա գիտնականների այն սերնդի ներկայացուցիչն էր, որին վիճակուած էր մշակել պատմութեան ու մշակոյթի յուշարձանների ուսումնասիրման, պահպանութեան, վերականգնման եւ օգտագործման ժամանակակից գործնական մօտեցումներն ու օրէնսդրական շրջանակը՝ 1980ականներից մինչեւ մեր օրերը:

Երկարամեայ գիտական գործունէութեան ու անընդմէջ ու հետեւողական աշխատանքի արգասիք են Բալանթարեանի ստեղծած շուրջ 15 մեծագործիւններն ու 150ից ւեպի գիտական հրապարակումները: Առանձին գրքերով

յոյս տեսած աշխատութիւններից են՝ *Դուինի Նիւրական Մշակոյթը IV-XIII դդ.* (1970), *Կենտրոնական Թաղամասի Պեղումները 1964-1970 թթ.* (1976), *Դուին* (1988), *Միջնադարեան Հայաստանի Առնետրական Կապերը 6-13րդ դդ.* (Ըստ Ապակեգործութեան Տունակների) (1988, համահեղինակ՝ Հովհաննէ Ջանփոլադեան), *Դուին Քաղաքը եւ Նրա Պեղումները (1973-1980 թթ)* (2002, համահեղինակ՝ Կարօ Ղաֆադարեան), *Հնագիտական Աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ.* (2005, համահեղինակ՝ Հ. Մելքոնեան) եւն.։ Եղել է բազմաթիւ յանձնաժողովներում եւ գիտական խորհուրդներում իրականացրել է մասնագիտական խորհրդատուութիւններ։

2002ից, ստեղծման առաջին իսկ օրումանից, Քալանքարեանը անդամակցեց «ԻԿՕՄՕՍ/Հայաստան»-ին (որի վարչութեան անդամ էր 2002-2008)՝ կազմակերպութեան ստեղծումը կարելուելով յուշարձանների պահպանութեան լծումը արհեստավարժների ու փորձագէտների միջեւ երկխօսութիւն ձեւաւորելու, ինչպէս նաեւ միջազգային փորձին հաղորդակցուելու տեսանկիւնից։

Արամ Քալանքարեանը մահացել է 27 Մարտ 2010ին։

ԱՍՏԴԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ (1919-2010)

Արուեստագիտութեան քեկնածու Աստղիկ Բագրատի Գեորգեանը ծնունդ է Լեւինականում (այժմ Գիւմրի), 1919ին, ուսուցչի ընտանիքում։ Միջնակարգ կրթութիւն ստացել է Գիւմրիում։ 1941ին ընդունուել Երեւանի Մանկավարժական Ինստիտուտի Լեզուագրական Ֆակուլտետը եւ աւարտել 1945ին։ Այդ թուականին նա ընդունուել է Մաշտոցեան Մատենադարան եւ այնտեղ աշխատել մինչեւ իր կեանքի մայրամուտը։

Նրա քեկնածուականը՝ «ԺԷ. Դարի Հայ Մանրականկարչութեան Պատմութիւն» նիւթով, նուիրում էր միջնադարեան հայ մանրակարչական արուեստի դպրոցների եւ գեղարուեստական ամենադոյնների ուսումնասիրման։

Մեծ է Գեորգեանի ներդրումը Մատենադարանի մանրանկարներ ունեցող մատենանների ուսումնասիրման բնագաւառում։ Աշխատանքային գործունէութեան ընթացքում նրա ջանքերով հաւաքուել են արժէքաւոր նիւթեր հայ մանրանկարիչների գործունէութեան եւ նկարազարդած ձեռագրերի մասին։ Երկար տարիների ընթացքում նրա կազմած եւ յոյս ընծայած միջնադարեան հայ մանրանկարիչների մատենագիտական ցանկերը, նրանց կենսագրական հարուստ տեղեկութիւնները մեծապէս դիւրացրել են հայ մանրանկարչութեան ուսումնասիրման գործը։

Նա բազմաթիւ աշխատութիւններ է նուիրել մանրանկարչութեան գործի հայ երախտատուներին, քացայայտել նրանց ստեղծագործութիւնների տեղն ու արժէքը հայ մանրանկարչութեան մէջ։ Ձեռագրական հարուստ նիւթերի հիման վրայ նա հետազօտել է միջնադարեան հայ արուեստի գրեթէ չուսումնասիրուած մի բնագաւառ՝ լուսագոյն մանրանկարչական յուշարձանների յետազոյ դարերում կատարուած ընդօրինակութիւնների խնդիրը։

Աստղիկ Գեորգեանի գրչին են պատկանում *Արհեստներն Ու Կենցաղը Հայկական Մանրանկարներում* (1978), *Հայկական Չարդատաւեր* (1991), *Կենդանագարդեր* (1996), *Հայ Մանրանկարիչներ. Մատենագիտութիւն IX-*

XVII Դարերում (1998), Ծաղկաբաղ Անետարան (2001), Ծաղկաբաղ Սաղմոսներ (2001), Վայոց Ձորի եւ Որոտամի Մանրանկարչությունը, 13-17 դդ. (2003), Գրիգոր Նարեկացին Մանրանկարներում եւ Մեծ Քերթողի Տաղերը (2005), Անանուն Հայ Մանրանկարիչներ. Մատենագիտություն IX-XVII դդ. (2005), Անանուն Հայ Մանրանկարիչներ. Մատենագիտություն XVIII-XIX դդ. (2007) արժեքատու աշխատությունները:

Աստղիկ Գեորգեանը իր գործին ամբողջովին նուիրում, ծայրաստիճան հասնելու եւ համակրելի անձնավորություն էր: Նրա ամուրը յաւերժ գրանցուել է Մատենադարանի վաստակաշատ անձնուէր երախտաւորների ցուցակում:

Աստղիկ Գեորգեանը մահացել է Սեպտեմբեր 2010ին, Երեւանում:

Մաշտոցի Անուան Մատենադարանի Տնօրէնութիւն



ԴԵՐԵՆԻԿ ՄՈՒՐԱԴԵԱՆ

(1925-2010)

Կեանքի 85րդ տարում մահկանացուն կնքեց հայ ժողովրդի պատմութեան հմուտ գիտակներից եւ հետազօտողներից մէկը, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտութիւնների թեկնածու Դերենիկ Արմենակի Մուրադեանը: Մուրադեանի ընտանիքում ծնուած երիտասարդը Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետում

ու թեկնածուական ատենախօսութիւն պաշտպանելուց յետոյ կեանքը կապեց ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի հետ, որի Նոր Պատմութեան Բաժնում անընդմէջ աշխատեց 60 տարի:

Մուրադեանն իր հարուստ գիտելիքներով օգնում էր բոլորին. գիտութեան շէնքին նոր ուղի դնող բազմաթիւ երիտասարդ գիտաշխատողներ նրա օգնութեամբ պաշտպանում էին թեկնածուական, յաճախ նաեւ՝ դոկտորական, իսկ ինքը շնտառագուելով գիտական ասպարէզով, իր հարուստ փորձով եւ աւելի քան հարուստ գիտելիքներով անընդմէջ սատար էր լինում գործընկերներին: Դրա վառ վկայութիւնն է 1966ին ակադեմիկոս Սլյուտիչ Ներսիսեանի աշխատասիրութեամբ ռուսերէն հրատարակուած *Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում* արխիւային փաստաթղթերի եւ նկարների արժեքատու ժողովածուի առաջարկում վերջինիս յայտնած շնորհակալութիւնը Մուրադեանին՝ ժողովածուի կազմման եւ հրատարակութեան աշխատանքներին ցուցաբերած «մեծ օգնութեան» համար:

Աւելի շատ գիտելիքներ ձեռք բերելու անյազուրոյ ձգտումով, Մուրադեանը հետազօտում եւ ուսումնասիրում էր արխիւային նորանոր փաստաթղթեր, պեղում աննամոռացուած յօդուածներն ու աշխատութիւնները եւ նոր միայն գրիչ վերցնում: Այդ իսկ պատճառով նրա գրած նոյնիսկ իրաքանչիւր փոքրածաւալ յօդուած դարձնում էր ոչ միայն հետաքրքիր քննարկումների առարկայ, այլեւ իմացութեան աղբիւր:

Նրա մենագրութիւններն ու գիտական յօդուածները վերաբերում են Ի. դարասկզբի հայ իրականութեան տարաբնոյք հարցերին: Առանձնացնենք դեռեւս 1964ին հրատարակուած *Հայաստանը Ռուսական Առաջին Ռեւոլյուց-*

իայի Տարիներին (1905-1907 թթ.) մեծագործինը, ինչպես նաև ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեանի հեղինակակցությամբ գրած եւ 1988ին լոյս ընծայած Հայաստանի Աշխատատեղերը Յարիզմի Դէմ Մղած Համաժողովրդական Պայքարում (1905-1907 թթ.) ուսումնասիրությունը: Դրանցում ուշադրություն է գրաւում ցարիզմի գաղութային քաղաքականութեան, փոքր ազգերի ծովման, ազգամիջեան ընդհարումների հրահրման՝ նրա մեծապետական քաղաքականութեան անաչառ վերլուծությունը:

Մեծ է Մուրադեանի ներդրումը նաև 1981ին լոյս տեսած Հայ Ժողովրդի Պատմութիւն ակադեմիական բազմահատորեակի ճող հատորի պատրաստման աշխատանքներում. նրա գրած բաժիններն աչքի են ընկնում քննարկուած հարցերի բազմազանութեամբ, պատմական դէպքերին եւ իրադարձութիւններին տրուած սեղմ եւ հատու գնահատականներով: Չնայած իր տարիքին եւ առողջական վիճակի վատթարացմանը, նա բարեխղճօրէն կատարեց նաև իր առջեւ դրուած խնդիրները յետխորհրդային ժամանակաշրջանում՝ կապուած ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի կողմից հրատարակութեան պատրաստուող Հայ Ժողովրդի Պատմութիւն նոր բազմահատորեակի 3րդ հատորի աշխատանքների իրականացման հետ: Մուրադեանը թէ՛ իրեն յանձնարարուած բաժինները գրեց պատշաճ մակարդակով եւ թէ՛ բժախնդրօրէն ընթերցեց ամբողջ հատորի նիւթերը եւ իր նպաստը բերեց դրա խմբագրման խրթին գործին: Սոյն հատորի հրատարակութիւնը դեռեւս ընթացքի մէջ է:

Գերեմիկ Մուրադեանը մահացաւ Երեւանում 31 Հոկտեմբեր 2010ին:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ



ՀԵՐՄԱՆ ԳՈՒՅՑ

(1946-2010)

Գերմանացի աստուածաբան, ուղղափառ եկեղեցիների մասնագէտ, հայագէտ, Հայլէ Վիթենբերգի Մարտին Լիւթեր Համալսարանի Աստուածաբանական Ֆակուլտետի Ուղղափառ Եկեղեցիների Դաւանաբանութեան Ամբիոնի դոկտոր պրոֆեսոր Հերման Գոլցը ծնուել է 1946ի Ապրիլի 1ին, Գերայում (Գերմանիա):

1964-69՝ աստուածաբանութիւն է ուսանել Հայլէ Վիթենբերգի Մարտին Լիւթեր Համալսարանում: 1975ին քննութիւնները յանձնելուց յետոյ նա աւետարանական քահանայի պարտականութիւններ է կատարել: 1979ին Մոսկուայում, Սանկտ Պետերբուրգում, Կիւեւում եւ Օդեսայում գիտահետազոտական աշխատանք է կատարել, որից յետոյ պաշտպանել է գիտական թեզ սլաւոնական եկեղեցական բարձրագոյնագրականութեան վերաբերեալ: 1982ին հիմնել եւ ղեկավարել է Եռհանձնեւ Լեփսիուսի արխիւը, 1987ին նշանակուել Հայդելբերգի Համալսարանի աստուածաբանութեան պրոֆեսոր: 1988-1993՝ Ժընեւում ղեկավարել է Եւրոպական Եկեղեցիների Ուսումնասիրութիւնների Բաժինը: Ի թիւս գերմանացի եւ հայ գիտնականների 1998ին Վիթենբերգում «Լոյկորեա» Հիմնադրամին կից հիմնել ու ղեկավարել է Հայկական Ուսումնասիրութիւնների «Մետրոպ» Կենտրոնը: 2000ին նրա նախաձեռնութեամբ Հայլէում քացուել է «Կիլիկիայի Փրկուած

Գանձերը» ցուցահանդեսը, իր հեղինակութեամբ հրատարակուել է մաե պատկերագիրը (*Der Gerettete Schatz der Armenier aus Kilikien, Վիսթադեն, 2000*):

Գոյցը ուսումնասիրել ու հրատարակութեան է պատրաստել բազմաթիւ աշխատութիւններ՝ ուղղափառ, յատկապէս յոյն, սլաւոն եւ հայ եկեղեցիների մասին, աստուածաբանութեան, արուեստի ու մշակոյթի վերաբերեալ: Խմբագրել, թարգմանել, ծանօթագրել եւ հրատարակել է *Akathistos. Hymnen der Ostkirche* (Ակատիստոս. Արեւելեան Եկեղեցու օրհներգերը), Լայպցիգ, 1988, *Tausend Jahre Taufe Russlands. Russland in Europa* (Ռուսաստանի դարձի հազարամեակը. Ռուսաստանը Եւրոպայում, Լայպցիգ, 1993), խմբագրել եւ համահեղինակել է *Deutschland, Armenien und die Türkei 1895-1925. Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv an der Martin-Luther-Universität Halle-Wittenberg*: (Գերմանիան, Հայաստանը եւ Թուրքիան 1895-1925 թթ.: Փաստաթղթեր եւ օրագրութիւններ Հալլէ-Վիթեն-բերգի Մարքին Լիքեր Համալսարանից դոկտոր Եոհաննէս Լեփսիուսի արխիւից, Սիւնխէն, 1998-2004), *Eastern Christians in Anthropological Perspective* (2010) հատորները: Գերմաներէն եւ թարգմանել եւ հրատակել Ժան Միշլէ Թիւրքիի *Armenien im Mittelalte* (Հայաստանը միջին դարերում) աշխատութիւնը, Ռեգենսբուրգ, 2002: Հայագէտ Արմէնուի Դրոս-Արգարեանի հետ թարգմանել ու հրատարակել է *Die Armenischen Kanones von Astowacayaynowf'w'n (Theophanie): Philologisch-Literaturwissenschaftliche Untersuchung zum Saraknoc'* (Աստուածայայտութեան հայկական կանոնները. Շարականից բանասիրական եւ գրականագիտական ուսումնասիրութիւն) աշխատութիւնը, Հալլէ, 2003: Դրոս-Արգարեանի հետ միասին խմբագրել է *Armenologie in Deutschland: Beiträge zum Ersten Deutschen Armenologen-Tag* (Հայագիտութիւնը Գերմանիայում. արձագանգներ գերմանացի առաջին հայագետների ժամանակներից) աշխատութիւնը, Մյունսթեր, 2005:

Տասնամեակների շարունակ Գոյցն իր նպաստն ու աջակցութիւնն է բերել Հայ Դատի, Գերմանիայում Հայոց Տեղասպանութեան ճանաչման ու դատապարտման ուղղութեամբ: Դրա վկայութիւնն են ոչ միայն տպագիր աշխատութիւնները, այլեւ նրա խորհրդատուութեամբ ստեղծուած Էրիկ Ֆրիդլէրի Աղէտ. Մի Տեղասպանութիւն փաստագրական շարժանկարը, որը 2010ի Հոկտեմբերին ստացել է գերմանական հեռուստատեսութեան 2010ի մրցանակը՝ «լաւագոյն վաւերագրութիւն» անուանակարգում: Գոյցի ջանքերի շնորհիւ Պոդգամում վերանորոգուել եւ որպէս հետազօտական կենտրոն վերաբացուել է Լեփսիուսի տունը:

Հայագիտութեանը եւ հայ մշակոյթին իր նուիրումութեան համար Գոյցն արժանացել է ՀՀ գնահատանքին: Հայոց Տեղասպանութեան 90ամեակի առթիւ ՀՀ վարչապետը նրան պատուել է շքանշանով: Կիլիկիոյ կարողիկոսը Սուրբ Մեսրոպ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ շքանշանի են արժանացրել Հերման Գոյցին: Նա Հայաստանի Ազգային Գրադարանի Յակոբ Մեղապարտ շքանշանակիր է, Երեւանի Պետական Համալսարանի Պատուաւոր Դոկտոր: Ստացել է մաե ռոս ուղղափառ եկեղեցու Իշխան Դանիէլ շքանշան:

Հերման Գոյցը մահացաւ 9 Դեկտեմբեր 2010ին Հալլէում (Գերմանիա), երկարատեւ ծանր հիւանդութիւնից յետոյ: ՀՀՀ



ԱՐՇՈՒԻ ՅՈՒՆԱՆԵԱՆ
(1926-2010)

Գրականագետ, բատերագետ, քանասիրական գիտությունների դոկտոր, հայ բատերագրության անխնայ հետազոտող Արծուի Ստեփանի Յունանեանը ծնունդ է 1926 Ապրիլի 5ին, Ղուկասեանի շրջանի Ղուկասեան գիւղում (այժմ՝ Աշոցք): 1933ին ընտանիքը փոխադրուել է Լենինական (այժմ Գիւմրի), որտեղ ստացել է միջնակարգ կրթութիւնը: Սովորել է Լենինականի Մանկավար-

ժական Ինստիտուտի Լեզուագրական Բաժնում: 1949ին աւարտել է Երեւանի Թատերական Ինստիտուտի նորաստեղծ Թատերագիտական Ֆակուլտետը: Այնուհետեւ ուսանել է ԳԱ Մանուկ Աբեղեանի անուն Գրականութեան Ինստիտուտի ասպիրանտուրայում, միաժամանակ աշխատել Թատերական Ինստիտուտում որպէս ընթերակայ եւ *Սովետական Գրականութիւն եւ Արուեստ* ամսագրում որպէս արուեստի բաժնի վարիչ: 1953-1962՝ եղել է խմբագիր Հայպետհրատում, 1962-1967՝ ԳԱ Արուեստի Ինստիտուտի աւագ գիտաշխատող, 1968ին՝ *Գրական Թերթ*ում բաժնի վարիչ: 1964ին «Արդի Հայ Դրաման» քննադով ատենախօսութիւն է պաշտպանել եւ ստացել քանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1969-1980՝ աշխատել է «Հայֆիլմ» Կինօստուդիայի Բեմագրական Բաժնում, 1980-1986՝ *Էկրան* հանդէսի խմբագրութիւնում:

1964ին հրատարակուեց Յունանեանի *Արդի Հայ Դրաման* մենագրութիւնը, որտեղ հեղինակը դիտակի տակ է առել 1956-1964ի հայ բատերագրական հունձքը՝ մամրագնին վերլուծման ենթարկելով այդ շրջանի թէ՛ ժամանակակից, թէ՛ անցեալին վերաբերող բատերգութիւնները: Նախ Յունանեանը յստակեցրել է դրամայի սեռի սահմանները, քանզի դրանք տարրալուծուել էին «պիէս» անորոշ սահմանման մէջ, այնուհետեւ անդրադարձել ստալինեան անհատի պաշտամունքի շրջանում ժամանակի կեանքն ու իրականութիւնը արտացոլող երկերին, ընդգծել ստեղծագործական որոշ ձեռքբերումները եւ վրիպումները: Յունանեանը ցայտուն օրինակներով բացայայտել է հայ բատերագիրների երկերում առկա սխալների զխաւոր պատճառը՝ որն էր սեռի առանձնայատկութիւնների անգիտութիւնը: Ի դէպ, այդ ժամանակաշրջանում դժուար էր բատերգութիւնների ժողովածու տպագրելը, եւ հեղինակները, իրենց քննադատին գտած՝ մրան էին տալիս իրենց ստեղծագործութիւնները՝ խորհրդի եւ կարծիքի: Այնքան մեծ էր Յունանեանի հեղինակութիւնը, որ նոյնիսկ Վահրամ Փափազեանն իր գրչի գործերը (յուշագրութիւններն ու լաւագոյն կերպարողութիւնների մասին գրքերը) հրատարակութեան յանձնելիս յատուկ խնդրում էր Յունանեանին տալ՝ կարծիքի:

Յունանեանի երկրորդ գիրքը՝ *Դրամատուրգները եւ Արդիականութիւնը* (1978), քննում էր ժամանակին քաղաքներում քննադրուած բատերախաղերը: Առաջին անգամ այս մենագրութեան էջերում ընդհանրացնող, ամբողջական վերլուծական մասնագիտական խօսք հնչեց Չարեանի, Բորեանի, Արաքսմանեանի, Վաղարշ Վաղարշեանի, Տէր-Գրիգորեանի, Սաղաթէ Յարութիւնեանի, Արտաշէս Բարայեանի դրամատիկ ստեղծագործութեան մա-

սին: Այս գրքում Յունանեանը գետնել էր նաեւ հայ խորհրդային քատերագրութեան սկզբնատրմանը նուիրում մի ուշագրաւ ուսումնասիրութիւն: Այս աշխատութեան մէջ է սկսել Յունանեանը վերլուծել Դերենիկ Դեմիրճեանի քատրերգութիւնը, որը յետոյ պիտի առաւել խորացնէր գրողին նուիրում ծաւալուն ուսումնասիրութեան մէջ:

Ինչ-որ չափով արունստակիցների տրտունջն ու նաեւ քատրոնի կարօտը Յունանեանին ստիպեց դառնալ դէպի բեմադրութեաւ: *Դրամատորգիա եւ Թատրոն* (1980) գրքում քննադատը վերլուծել է Սունդուկեանի քատրոնի մի քանի բեմադրութիւններ եւ առանձին դերասանների լաւագոյն դերակատարումները: Սրան յաջորդել է *Սովետական Հայ Դրամատորգիան* (1986) խորագրով ուսումնասիրութիւնը, որտեղ այդ սեռի ոչ մի հեղինակի չի մոռացել: Նախասիրած լրջութեամբ եւ մանրակրկիտ վերլուծութեամբ՝ հեղինակը կոչ է արել դառնալ սեռի օրէնքներին եւ իրականութեան գեղարուեստական արտացոլմանը՝ սեռի պահանջով՝ գործողութեան, բախումի, նկարագրերի դիտանկիւնից:

Դեմիրճեանին նուիրում Յունանեանի ստուարածաւալ ուսումնասիրութիւնը (*Դ. Դեմիրճեանի Դրամատորգիան*, 1988), որի պաշտպանութեամբ նա արժանացաւ քանասիրական գիտութիւնների դոկտորի կոչման, ի մի է բերում հայ արդի քատրերգութեան լաւագոյն ձեռքբերումները: Այնուհետեւ Յունանեանը ուսումնասիրութեան առարկայ դարձրեց հայ քատերագրութեան միւս կարեւոր դէմքերի՝ Յակոբ Պարոնեանի եւ Լեւոն Շանթի ստեղծագործութիւնը: Առաջինը՝ *Յակոբ Պարոնեանը Դրամատորգ* գիրքը լոյս տեսաւ 2003ին: Սրանից բացի Յունանեանը ռուսերէնից թարգմանել է չինացի գրող Գօ Մօ-ժոյի *Երկրորեակներ* քատերախաղը (լոյս է տեսել հեղինակի *Ընտիր Երկերի* հայերէն իրատարակութեան մէջ, Երեւան, 1954):

Արծուի Յունանեանը մահացաւ 24 Դեկտեմբերի 2010ին, Երեւանում: Հոգեհանգստին եկածները նրա սնարի մօտ տեսան նոր ստացուած նրա վերջին՝ *Շքրսպիրեան Հրավառութիւններ Հայ Թատրոնում* աշխատութեան առաջին օրինակը եւ... Լեւոն Շանթին նուիրում վիթխարի աշխատութեան (900 էջ) մեքենագիրը:

ՎԱՐՄԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ

